Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2017 թվականի 4-րդ եռամսյակի դրությամբ

(ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի մասով)

հ/հ	Գերակա խնդիրը	Գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերը	Կատարման Ժամկետը	2017 թվականի 4-րդ եռամսյակի դրությամբ կատարված աշխատանքները
96	Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի (շինարարական նորմեր, կանոնների հավաքածուներ, ստանդարտներ, կարգեր, կանոններ) մշակում, վերանայում, տեղայնացում	1)հաստատել 2017-2022 թվականների ընթացքում առաջնահերթ վերանայման, մշակման (տեղայնացման), ենթակա նորմատիվ փաստաթղթերի ցանկը և աշխատանքների իրականացման ժամանակացույցը 2) 2017 թվականին նախատեսված առաջնահերթ նորմատիվ փաստաթղթերի վերանայում, մշակում (տեղայնացում) 2.1) թվով մեկ առաջնահերթ նորմատիվ փաստաթղթի մշակում (տեղայնացում) («Բնակչության սակավաշարժուն խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու» ՀՀ շինարարական նորմերի կանոնների հավաքածու): 2.2) թվով երեք առաջնահերթ նորմատիվ փաստաթղթերի մշակում (տեղայնացում) («Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ», «Պողպատե կոնստրուկցիաներ», «Հասարակական շենքեր և շինություններ» ՀՀ շինարարական նորմեր):	նոյեմբերի 3-րդ տասնօրյակ նոյեմբերի 3-րդ տասնօրյակ, Սկիզբը 2017 թվականի 3-րդ եռամսյակ, ավարտը՝2018 թվական ըստ գնման ժամանակացույցի	ՀՀ վարչապետի՝ 2017 թվականի ապրիլի 27-ին ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե կատարած այցի շրջանակներում կայացած խորհրդակցության ժամանակ տրված հանձնարարականի համաձայն՝ ՀՀ գործադիր իշխանության մարմինների և բնագավառի մասնագիտացված կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա, մշակվել և Կոմիտեի նախագահի 2017 թվականի նոյեմբերի 15-ի N151-Ա հրամանով հաստատվել է 2017-2022 թվականների ընթացքում ՀՀ տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի առաջնահերթ վերանայման, մշակման (տեղայնացման) ենթակա նորմատիվ փաստաթղթերի ցանկը և դրանց իրականացման ժամանակացույցը: Դրա հետ մեկտեղ, ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N1313-Ն որոշման համաձայն մշակվել են «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում ծրագրով» նախատեսված՝ 2017 թվականին իրականացվելիք միջոցառումները, որոնք հաստատվել են Կոմիտեի նախագահի 2017 թվականի մարտի 6-ի N31-Ա հրամանով և հրապարակվել Կոմիտեի պաշտոնական կայքում (http://minurban.am/lows/files/1847.pdf): Նշված միջոցառումների համաձայն մշակվել են «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ», «Պողպատե կոնստրուկցիաներ», «Հասարակական շենքեր և շինություններ» ՀՀ շինարարական նորմերի և «Բնակչության սակավաշարժուն խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու»

				ՀՀ շինարարական նորմերի կանոնների հավաքածուի աշխատանքների գնման հայտերի փաթեթները, հայտարարվել է գնանշման հարցում՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաղթող կազմակերպությունների հետ կնքվել են փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պայմանագրերը: Նշված 4 փաստաթղթերից՝ Կոմիտեի և «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության միջև 2017 թվականի օգոստոսի 15-ին կնքված ՈՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/1-1 պետական գնման պայմանագրի համաձայն մշակված «ՀՀԿՀ 23-101-«Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու» փաստաթղթի նախագիծը Կոմիտեի 2017 թվականի դեկտեմբերի 4-ի N01/14.2/7303-17 գրությամբ ներկայացվել է պետական կառավարման մարմիններ՝ կարծիքի: Մյուս 3 փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտը նախատեսված է 2018 թվականին:
97	Հայաստանի Հանրապետության համայնքներում քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բազայի համալրում, մինչև 2021 թվականի հունվարի 1-ը հանրապետության բոլոր համայնքներին ապահովում քաղաքաշինական ծրագրային (համակցված) փաստաթղթերով	1) Գնման գործընթացի կազմակերպում 2) Համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակում 3) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատման գործընթացի համակարգում	մարտի 3-րդ տասնօրյակ հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ նոյեմբերի 1-ին տասնօրյակ	Մշակվել են ՀՀ Տավուշի մարզի համայնքների թվով 6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի տեխնիկական բնութագրերը: Կազմվել է մրցութային հայտ և «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով 2017 թվականի մարտի 14-ին հայտարարվել մրցույթ: ՀՀ Տավուշի մարզպետարանից ստացված ելակետային տվյալների հիման վրա կազվել են նախագծման առաջադրանքները, ներկայացվել շահագրգիռ մարմիններ՝ համաձայնեցման և ոլորտներին առնչվող իրենց մոտ առկա ելակետային նյութերը ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեին տրամադրելու նպատակով: 2017 թվականի հունիսի 15-ին ներկայացվել է թվով 6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծային աշխատանքների 1-ին փուլը: Պատասխանատու ստորաբաժանման կողմից

				նախագծային աշխատանքների 1-ին փուլին տրվել է դրական եզրակացություն, որից հետո կապալառու կազմակերպությունների կողմից ներկայացվել է փաստաթղթերի մշակման 2-րդ փուլի աշխատանքը: Ներկայումս ՀՀ Տավուշի մարզի համայնքների թվով 6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման աշխատանքներն ավարտված են: Նախագծերը գտնվում են համաձայնեցման և հաստատման փուլում:
98	Շինարարական աշխատանքների գնագոյացման մեթոդաբանության արդիականացում և շինարարական արտադրանքի արժեքի հաշվարկման սկզբունքների ձևավորում	1) Մասնագիտական քննարկումներ շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ 2) Աշխատավարձի հաշվարկի վերաբերյալ խորհրդակցությունների արդյունքում առաջարկված լուծումների ամփոփում 3) 2016 թվականի շինարարական աշխատանքների աշխատավարձերի մոնիթորինգ՝ յուրաքանչյուր աշխատաձևի վճարման չափի ուսումնասիրում 4) Շինարարական աշխատանքների արժեքի կառուցվածքի քննարկում և անհրաժեշտության դեպքում վերանայում 5) ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N879-Ն որոշման 3-րդ կետով հաստատված կարգի մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարության քննարկմանը:	հունվարի 3-րդ տասնօրյակ հունվարի 3-րդ տասնօրյակ փետրվարի 1-ին տասնօրյակ մարտի 1-ին տասնօրյակ սեպտեմբերի 1-ին տասնօրյակ	Շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման բաղադրիչների արդիականացան, շինարարական նեդրումային ծրագրերի և առանձին տեսակի շինարարական աշխատանքների գնահատման գործընթացը հնարավորինս պարզեցնելու և մատչելի դարձնելու, ինչպես նաև 1984 թվականի գների և դրանց ինդեքսավորման մեթոդների հետ չկապվելու նպատակով Կոմիտեի կողմից մշակվել է «ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N879-Ն որոշման 3-րդ կետով հաստատված կարգի մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը 2017 թվականի օգոստոսի 24-ին ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: Նախագիծը ներառվել է Մշտապես գործող տարածքային զարգացման և բնապահպանական նախարարական կոմիտեի սեպտեմբերի 22-ին կայացած նիստի օրակարգում և քննարկման արդյունքում հանձնարարվել է այն ևս մեկ անգամ քննարկել շահագրգիռ մարմինների հետ: Նախագիծը դեռևս գտնվում է քննարկման փուլում: Քննարկման արդյունքում նախագծի վերջնական լրամշակված տարբերակը կներկայացվի ՀՀ կառավարության աշխատակազմ:
99	Կառուցապատման ներդրումային ծրագրերի մշակում	Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման աշխատանքների համակարգում, այդ թվում՝ տարածքների կառուցապատման ներդրումային	նոյեմբերի 3-րդ տասնօրյակ (պարբերաբար)	Համակարգվել են հետևյալ ներդրումային ծրագրերի իրականացման աշխատանքները՝ **1. *Երևան քաղաքի 33-րդ թաղամասի (ներկայիս Ֆիրդուսի շուկայի տարածք) կառուցապատման ներդրումային ծրագիր.***

		գրավչության հայտանիշների բացահայտման հիման վրա նեդրումային փաթեթների ստեղծում		Ծրագրով նախատեսվում է Հանրապետության Հրապարակի հարևանությամբ, Տիգրան Մեծի պողոտայի և Հանրապետության, Փ. Բուզանդի ու Խանջյան փողոցների միջակայքում կառուցել թաղամաս՝ բնակելի, հասարակական և սպասարկման օբյեկտներով, բիզնես կենտրոններով, հյուրանոցներով, ինչպես նաև տրանսպորտային հաղորդակցության նոր ուղիներով: Ծրագրով նախատեսված տարածքը կազմում է ավելի քան 5 հա: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 3-4 տարում: Ներկայումս մշակվել է կենտրոնական հրապարակի նախագիծը, ընթանում են տարածքի իրացման աշխատանքներն ու առանձին հատվածների հողային աշխատանքները: **2. *Երևան քաղաքում «Նոյ» ազգագրական թաղամասի ներդրումային ծրագիր.*** Ծրագրով նախատեսվում է «Դալմա Գարդեն Մոլ» առևտրազվարճային համալիրին հարող տարածքում ստեղծել Հայաստանի տարբեր տարածաշրջանների բնակավայրերի ավանդույթներին ու ճարտարապետական դիմագծին բնորոշ ազգագրական թաղամաս: ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի քննարկմանն են ներկայացվել ներդրումային ծրագրի իրականացման նպատակով հայտարարված մրցույթին մասնակցած միջազգային (ամերիկյան «AECOM» և «SWA», բրիտանական «ARUP», լիբանանյան «ERGA») ընկերությունների նախագծային առաջարկները: ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի համար թաղամասի քաղաքաշինական և ճարտարապետական կազմակերպման տեսանկյունից առավել նախընտրելի են համարվել (ըստ առաջնահերթության)՝ «ARUP», «SWA» և «ERGA» նախագծային կազմակերպությունների ներկայացրած առաջարկները: Տարածքի կառուցապատման ներդրումային ֆոնդը գտնվում է ձևավորման փուլում, որին մասնակցելու պատրաստակամություն են հայտնել հողամասերի սեփականատերերը և Երևանի քաղաքապետարանը:

				3. *Երևան քաղաքում «Հին Երևան» կառուցապատման ներդրումային ծրագիր.* Գլխավոր պողոտայի մոտ 2.2 հա մակերեսով տարածքում (Աբովյան-Փ.Բուզանդ-Ե.Կողբացի-Արամի փողոցներով սահմանափակվող հատված) նախատեսվում է իրականացնել 19-20-րդ դարերի ճարտարապետական քաղաքաշինական միջավայրի վերականգնումը՝ պատմական կառույցների հիմնական ֆոնդում ներառված և ներկայումս ապամոնտաժված կամ տեղափոխման ենթակա կառույցներով: Ծրագրի իրագործման գործընթացը կրում է շարունակական բնույթ և ավարտին կհասցվի 3-4 տարվա ընթացքում, այն նախատեսվում է իրականացնել փուլային եղանակով: Կոմիտեն համակարգում է նշված ծրագրի իրականացման, ինչպես նաև դրանում ներառված առանձին հատվածների նախագծային փաստաթղթերը համապատասխան լիազոր մարմինների հետ համաձայնեցման գործընթացը: Ծրագրում ներառված տարածքի իրացված մասերում սկսվել են հողային աշխատանքներ: ***4. Այլ աշխատանքներ.*** *<u>4.1. Ներդրումային ծրագրերի կառավարում, համակարգում, վերահսկողություն և մոնիթորինգ.</u>* - ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի համակարգմամբ իրականացվող թվով 54 կառուցապատման ներդրումային ծրագրերն իրականացվում են պետական և մասնավոր վարկային միջոցների հաշվին (որոնցից 19-ը՝ պետական և 35-ը՝ մասնավոր): Վերը նշված 54 ծրագրերի 2017 թվականի ընդհանուր կատարողականի կանխատեսման ցուցանիշը (01.12.2017 թ.դրությամբ) կազմել է մոտ 87 340 000 ԱՄՆ դոլար: Ներդրումային ծրագրերով նախատեսված կառույցների գերակշռող թվի շինարարական աշխատանքները գտնվում են ակտիվ փուլում: Միևնույն ժամանակ, նշված ներդրումային ծրագրերի կանխատեսման ցուցանիշը (01.01.2018 թ.դրությամբ) կազմել է 99 100 000 ԱՄՆ դոլար: - Կոմիտեի պատվիրատվությամբ Երևանի Աբովյան

				հրապարակին հարող զբոսայգու հարակից տարածքում իրականացվում է «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոնի կառուցումը: - Համակարգվում են Երևանի Կենտրոն վարչական շրջանում Երևանի թատրոնի և կինոյի ինստիտուտի և Մուշեղ Իշխանի անվան N5 դպրոցին հարակից տարածքում բազմաբնակարան շենքի և Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնի շենքի նախագծային աշխատանքները: - Ավարտին են մոտենում Բրազիլիայում Բուրմանյան ընտանիքի կողմից իրականացվող ՀՀ դեսպանատան շինարարական աշխատանքները: Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում կառուցապատման ներդրումային ծրագրերի շրջանակներում համակարգվում են. <u>*Ջերմուկ քաղաքում*</u>՝ - բնական թերմալ ջրերի փակ և բացօթյա լողավազանային համալիրով SPA կենտրոնի և երկու հյուրանոցային համալիրների կառուցման ներդրումային ծրագիրը: Ներկայումս ընթանում են նշված կառույցների նախագծման աշխատանքները. - Ջերմուկի քաղաքային հրապարակից մինչև Ըմպելասրահ հետիոտն սալահատակված փողոցի կազմակերպման ներդրումային ծրագիրը. - Ժամանցային կենտրոնի կառուցման ներդրումային ծրագիրը (Ջերմուկի լճի առափնյա սրճարանի տեղում). - քաղաքի գոյություն ունեցող մշակութա-առողջարանային համալիրի վերակառուցման ներդրումային ծրագիրը: <u>*«Սևան ազգային պարկի» տարածքում*</u> քաղաքաշինական խնդիրների կանոնակարգման և ներդրումային ծրագրերի խրախուսման նպատակով մշակվել է՝ - Սևանի թերակղզում դեպի եկեղեցի տանող ճանապարհի և շրջակա որոշ տարածքների վերահատակագծման էսքիզային առաջարկություն. - Լճաշեն-Սևան հատվածը ներառող ծովափնյա տարածքի բարեկարգման էսքիզային նախագիծ:

				Գյումրիում. Գյումրու պատմական կենտրոնի զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից համակարգվել է «Կումայրի» պատմաճարտարապետական հատվածի՝ Շիրազի և Ռուսթավելու փողոցների վերականգնման ծրագիրը:
100	Կառուցապատման ընթացակարգերի պարզեցման շարունակական իրականացում	1) Քաղաքաշինության ոլորտում թույլտվությունների ստացման էլեկտրոնային համակարգի գործարկման նպատակով համակարգի սպասարկման ծառայությունը ձեռք բերելու գնման գործընթացի կազմակերպում 2) Թույլտվությունների ստացման էլեկտրոնային համակարգը սպասարկող կազմակերպության հետ պայմանագրի կնքում 3) Թույլտվությունների ստացման էլեկտրոնային համակարգի գործարկում	հունվարի 3-րդ տասնօրյակ փետրվարի 3-րդ տասնօրյակ հունվարի 3-րդ տասնօրյակ	ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N128-Ն հրամանով հաստատվել են «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները» (ՀՀ արդարադատության նախարարության գրանցման համարը՝ N1171737, 15.09.2017թ): Փաստաթղթով նախագծային փաստաթղթերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները դասակարգվել են ըստ շինարարական օբյեկտների ռիսկայնության աստիճանի: Ներառվել են նաև էներգախնայողությանը ներկայացվող պահանջներ: ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 23-ի N280-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման մեջ կատարվել է լրացում՝ ինժեներական ենթակառուցվածքների անցկացման ընթացակարգերի պարզեցման մասով: Իրականացվում են առցանց թույլտվությունների տրամադրման համակարգի սպասարկման ընթացիկ աշխատանքները:
101	Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի պահպանմանն ու շահագործմանը վերաբերող խնդիրների կանոնակարգում	1) հանրապետության բազմաբնակարան բնակարանային ֆոնդի վերաբերյալ ՀՀ մարզպետարաններից և Երևանի քաղաքապետարանից ստացված տեղեկատվության ամփոփում, 2) ՀՀ վարչապետի 2017 թվականի հուլիսի 7-ի N719-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից բազմաբնակարան շենքերի կառավարման	օգոստոսի 3-րդ տասնօրյակ նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	- Կոմիտեի կողմից հավաքագրվել և ամփոփվել է հանրապետության բնակավայրերում առկա բազմաբնակարան շենքերի (այդ թվում՝ 3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող) շենքերի թվի, դրանց կառավարման ձևի, ինչպես նաև ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի փաստացի վիճակի վերաբերյալ ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված տեղեկատվությունը: Տեղեկատվության վերլուծության արդյունքները և

		բնագավառում առկա խնդիրների կանոնակարգմանն ուղղված օրենսդրական կարգավորումների վերաբերյալ առաջարկությունների մշակում:		ուրվագծված հիմնական խնդիրները, ինչպես նաև դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունները ՀՀ կառավարության աշխատակազմ են ներկայացվել 2017 թվականի հուլիսի 24-ի N01/13/4635-17 գրությամբ: - ՀՀ վարչապետի 2017 թվականի հուլիսի 7-ի N719-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի աշխատանքների շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարություն են ներկայացվել «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Համատիրության մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ Կոմիտեի առաջարկությունները՝ նախագծի տեսքով: - «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի մշակմանն աջակցելու նպատակով ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 10-ից 17-ը կազմակերպվել է այց Էստոնիայի Հանրապետություն՝ Էստոնիայում բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտում առկա փորձին և օրենսդրական դաշտին ծանոթանալու համար: Այցին մասնակցել են նաև Կոմիտեի ներկայացուցիչները: Այցի արդյունքում կազմվել և ՄԱԶԾ հայաստանյան գրասենյակ է ներկայացվել համապատասխան հաշվետվություն և առաջարկություններ: - 2017 թվականի սեպտեմբերի 11-ին Երևան քաղաքում կազմակերպվել է «Հայաստանի կայուն բնակարանային տնտեսության, քաղաքաշինության և հողերի կառավարման բնագավառներում առկա միտումները և մարտահրավերները» աշխատաժողովը՝ Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի, Միավորված ազգերի կազմակերպության Հաբիթաթի, ՄԱԶԳ-ի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ: Աշխատաժողովի ժամանակ ներկայացվել է Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի բնակարանային և հողերի կառավարման կոմիտեի 2016 թվականի սեպտեմբերի

				13-ից 16-ը կայացած 77-րդ նստաշրջանի ընթացքում հաստատված և 3 լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հրատարակված՝ Հայաստանի բնակարանային տնտեսության, քաղաքաշինության և հողերի կառավարման մասով Երկրի նկարագիրը (Country Profile) և քննարկվել են Ազգային Գործողությունների Ծրագրի միջոցով դրանց իրականացման հնարավորությունները:
102	Նախագծային և շինարարական աշխատանքների որակի բարձրացման նպատակով աջակցություն նոր տեխնոլոգիաների մշակման ու ներդրման գործընթացներին	1) նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ներկայացված առաջարկությունների քննարկում և ներդրման նպատակով սահմանված կարգով գործընթացի իրականացում 2) «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» բաց բաժնետիրական ընկերության հենքի վրա Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կազմում հանրապետական նշանակության արդիական գիտահետազոտական կենտրոնի (լաբորատոր բազայի) ստեղծում	2017 թվական շարունակական 2017-2022 թվականներ	Կոմիտեի նախագահին կից ինժեներատեխնիկական հանձնաժողովի նիստերում կազմակերպվել են՝ -«Ար և Ար Դիզայն Քնսթրաքշն» ԱՊԸ-ի կողմից առաջարկված շենքերի պատող կոնստրուկցիաների համար նոր տիպի ջերմամեկուսիչ պատի կոնստրուկտիվ լուծումների, տեխնոլոգիական առանձնահատկությունների, տեխնիկատնտեսական ցուցանիշների, -Ասիական զարգացման բանկի «Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի» իրականացման շրջանակներում նախագծված մոդուլային դպրոցների նախագծերում կիրառության հնարավորության հարցի, -«Ամուռկավ» ապրանքային անվանմամբ ջերմաձայնամեկուսիչ արհեստական կերամիկական քարից պատրաստվող մոդուլային տիպի տների («Նոր տուն»), -Սեյսմակայուն շինարարության հայկական ասոցիացիայի նախագահ Մ. Մելքումյանի կողմից ներկայացված նոր կառուցվող և վերակառուցվող (ուժեղացվող) շենքերում սեյսմամեկուսացման համակարգերի ներդրման առավելությունների, տնտեսական շահավետության և դրանց լայնորեն կիրառման հնարավորությունների, -«Օնիքս ԳԸ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բազալտե և ապակե մանրաթելերի հենքի վրա փուլթրուզիոն եղանակով արտադրվող բազալտեպլաստե և ապակեպլաստե շինվածքների ու կոնստրուկտիվ տարրերի արտադրության ներդրման, -«Արջերմեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բազալտե նուրբ մանրաթելերի հենքի վրա ջերմամեկուսիչ նյութերի արտադրության ընդլայնման և կիրառության,

				-«Արգել» ՓԲԸ-ի կողմից բազալտե մանրաթելերից ոչ մետաղական կոմպոզիտային ամրանների արտադրության ընթացքի և փորձարկման արդյունքների վերաբերյալ քննարկումներ: Քննարկումների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ և համապատասխան առաջարկություններով ներկայացվել են ՀՀ կառավարության աշխատակազմ: ՀՀ վարչապետի՝ 2017 թվականի ապրիլի 27-ին Կոմիտե կատարած այցի շրջանակներում կայացած խորհրդակցության ժամանակ տրված հանձնարարականի համաձայն՝ նորարարական տեխնոլոգիաների զարգացմանն ու ներդրմանն աջակցելու նպատակով Կոմիտեի 2017 թվականի հունիսի 2-ի N01/16.1/3211-17 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել «Շինարարության ոլորտում նոր տեխնոլոգիաների մշակման աջակցություն և ներդրում» ծրագրի 2018-2020 թվականների ՄԺԾԾ-ի հայտը: Սակայն, ՀՀ պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի 2017 թվականի մայիսի 16-ի N01/23.16/11485-17 որոշ-մամբ նշված ծրագրի իրականացման համար բյուջետային ծախսերի ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներ չեն հաստատվել: «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» բաց բաժնետիրական ընկերության բազայի վրա Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի գիտաարտադրական փորձարարական և ուսումնական լաբորատոր կենտրոն հիմնելու ծրագիրը: Ծրագիրը կիրականացվի «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» և «ԱԻՍՄ» բաց բաժնետիրական ընկերությունների առանձնացման հետ կապված դատական գործընթացի ավարտից հետո: «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» բաց բաժնետիրական ընկերության հենքի վրա Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կազմում

				հանրապետական նշանակության արդիական գիտահետազոտական կենտրոնի (լաբորատոր բազայի) ստեղծման հարցը քննարկվել է նաև ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի մոտ՝ դեռևս 2016 թվականի մայիսի 25-ին կայացած խորհրդակցության ժամանակ: Խորհրդակցության ժամանակ տրված հանձնարարականի համաձայն 2016 թվականի հունիսի 10-ի N01/12.1/3115-16 գրությամբ ՀՀ փոխվարչապետին է ներկայացվել «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» բաց բաժնետիրական ընկերության լաբորատոր բազայի վերազինման և արդիականացման համար պահանջվող ֆինանսական միջոցների, սարքերի ու սարքավորումների ցանկի վերաբերյալ տեղեկանքը, որը քննարկվել է ՀՀ վարչապետի 2016 թվականի հունիսի 30-ի N582–Ա որոշմամբ ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 22-ի նիստում: Նիստում ներկայացված առաջարկությունն ընդունվել է ի գիտություն և որոշվել է հարցին անդրադառնալ հետագա հնարավոր խնայողությունների ձևավորումից հետո:
103	Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման և ազգային անվտանգության ապահովման նպատակով շենքերի և շինությունների սեյսմիկ ռիսկի նվազեցում, ինչպես նաև դրանց սեյսմակայունության և հուսալիության բարձրացում	1) Նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անձնագրավորման գործընթացը մեկ միասնական կարգով սահմանելու նպատակով ՀՀ պետական կառավարման մարմինների և ՀՀ մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ քննարկումների իրականացում 2) «Նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անձնագրավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	նոյեմբերի 3-րդ տասնօրյակ 2018 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակ	Շենքերի սեյսմակայունության բարձրացման հիմնական ռազմավարական փաստաթուղթ ունենալու և Հանրապետական գործադիր մարմինների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց կառավարման ոլորտնում գտնվող շենքերի մասով միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրային փաստաթղթերի մշակման համար ռազմավարական ուղենիշեր ապահովելու նպատակով Կոմիտեի կողմից մշակվել և ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի նիստի N39 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետությունում շենքերի և շինությունների սեյսմակայունության բարձրացման 2018-2030 թվականների ռազմավարությունը: Տարբեր նշանակության շենքերի հուսալի շահագործման ուղղությամբ մշակվել են «Շենքերի

		3) շենքերի ու շինությունների փաստացի տեխնիկական վիճակի հետազննությունների և տեխնիկական անձնագրավորման իրականացման արդյունքում ձեռք բերված ելակետային տվյալների հիման վրա համակարգչային ծրագրի մշակում և ներդնում՝ տվյալների մշտական ռեժիմով թարմացման հնարավորությամբ	2019 թվական շարունակական	տեխնիկական վիճակի հետազննություններ և տեխնիկական անձնագրավորում» ծրագրով նախատեսված 2017 թվականին իրականացվելիք միջոցառումները, որոնք հաստատվել են Կոմիտեի նախագահի 2017 թվականի մարտի 3-ի N30-Ա հրամանով ու հրապարակվել Կոմիտեի պաշտոնական կայքում (http://minurban.am/lows/files/11_30_A.pdf): ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցների հաշվին Երևան քաղաքում և ՀՀ մարզերի բնակավայրերում իրականացվել են առաջնահերթ հետազննության ենթակա թվով 64 տարբեր նշանակության շենքերի փաստացի տեխնիկական վիճակի հետազննություններ, որոնց արդյունքների հիման վրա ներկայացվել են համապատասխան «Եզրակացություններ» և «Տեխնիկական անձնագրեր»: Նոր կառուցվող և գոյություն ունեցող տարբեր նշանակության շենքերի ու շինությունների անձնագրավորման գործընթացը մեկ միասնական կարգով սահմանելու նպատակահարմարության վերաբերյալ ՀՀ պետական կառավարման մարմինների, ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի հետ քննարկումներն ընթացքի մեջ են, և քննարկումների արդյունքում մշակված ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ կներկայացվի սահմանված ժամկետում: